Քաղաքացիական հասարակության հարգելի ներկայացուցիչներ,

2021 թվականից ԵՄ ֆինանսական աջակցությամբ մեկնարկել է «Համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն» եռամյա ծրագիրը, որն իրականացվում է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամի, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Հրանտ Մաթևոսյան հիմնադրամի կողմից՝ համագործակցաբար:

Ծրագրում կարևորվում է քաղաքացիական հասարակության դերը՝ համայնքներում աղքատության վերացմանն ուղղված քաղաքականությունների մշակման և իրականացման գործում: Մասնավորապես, Ծրագիրը նախատեսում է ակտիվացնել անհավասարության և աղքատության վերաբերյալ հանրային քննարկումները և իրականացնել աղքատության կրճատմանն ուղղված սոցիալական նախաձեռնություններ:

Ծրագրի շրջանակներում կարևորվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) կարողությունների բարելավումը մի շարք ուղղություններով, մասնավորապես՝ բյուջետային գրագիտության բարձրացում, հանրային ծրագրերի մշակման գործընթացներում մասնակցության բարելավում, ծրագրերի մոնիթորինգ և գնահատում:

«Հանրային բյուջեներ և բյուջետային ծրագրերի մոնիթորինգ» թեմայով երկօրյա վերապատրաստման դասընթացը կիրականացվի Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի (ՏԶՀԿ) կողմից: Կենտրոնը մասնագիտացած է տնտեսական և սոցիալական հետազոտությունների և քաղաքականությունների գնահատման, ինչպես նաև բյուջետային գրագիտության և վերլուծական/հետազոտական կարողությունների բարելամանն ուղղված վերապատրաստումների իրականացման աշխատանքներում: Մեծ է Կենտրոնի փորձառությունը քաղաքացիական հասարակության հետ աշխատանքում. բազմաթիվ դասընթացներ և մենթորինգային միջոցառումներ է իրականացրել հասարակական կառույցների, ուսանողների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար: Վերջին 4 տարիների ընթացքում Կենտրոնն իրականացրել է ավելի քան 35 վերապատրաստման դասընթացներ նաև բյուջետային գործընթացներում ներգրավված պետական մարմինների աշխատակիցների, բարձրաստիճան պետական պաշտոնյաների և ԱԺ պատգամավորների համար:

Հրավերին կարող են արձագանքել քաղաքացիական հասարակության բոլոր հետաքրքրված կազմակերպությունները, որոնք կիսում են սույն ծրագրային նպատակները, ունեն որոշակի փորձ և համապատասխան կարողություններ համագործակցելու 2022-2023 թվականների ընթացքում՝ նպաստելու Հայաստանում և իրենց համայնքներում աղքատամետ բյուջետային ծրագրերի մշակմանը, մասնակցելու բյուջետային գործընթացներին:

Ծրագրի շրջանակներում առաջիկայում կհայտարարվի նաև թիրախ մարզերի համայնքներում տեղական բյուջեների մոնիտորինգի, մասնակցային բյուջետավորման, ինչպես նաև առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված համայնքային նախաձեռնությունների

ֆինանսավորման դրամաշնորհային մրցույթ, որին մասնակցելիս վերապատրաստման դասընթացներին մասնակցությունը կդիտվի առավելություն:

Դասընթացը նախատեսված է Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում, ինչպես նաև հանրապետական մակարդակով գործունեություն իրականացնող քաղաքացիական հասարակության լազմակերպությունների համար: Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **2022 թվականի փետրվարի 28-ը** լրացնել առցանց դիմումի ձևը հետևյալ հղմամբ՝ https://forms.gle/WVhqweLG4VYGam5s7: Ընտրված մասնակիցները լրացուցիչ կտեղեկացվեն դասընթացի անցկացման վայրի և այլ մանրամասների վերաբերյալ:

Լրացուցիչ տեղեկությունների և հարցերի համար կարող եք դիմել Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն՝ Լիլիթ Հակոբյանին (հեռախոս՝ 096 22 38 03):

Հարգանքով՝

ԾՐԱԳՐԻ ԹԻՄ

«Համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն» ծրագիր